Հավելված

ՀՀ ֆինանսների նախարարի 2019թ.

ապրիլի 30-ի N 332-Ա հրամանի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի 2018 թվականի

(համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ մասի)

2018 թվականի հաշվետու տարում ներքին աուդիտի համակարգը՝ նախորդ տարվա ՀՀ հանրային հատվածի 233 կազմակերպությունների փոխարեն, գործել է 224 կազմակերպություններում, այդ թվում ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված թվով 56 պետական (այսուհետ՝ ՊՄ), և թվով 46 տեղական ինքնակառավարման մարմիններում (այսուհետ՝ ՏԻՄ), ներքին աուդիտն իրականացվել է կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով (տե՛ս Ցանկ N 1, Ցանկ N 2): ՏԻՄ-ում ներքին աուդիտի համակարգը գործել է թվով 40 քաղաքային և թվով 6 գյուղական համայնքներում: 2017 թվականի համեմատությամբ, 2018 թվականին ներքին աուդիտի համակարգ ներդրած՝ ՊՄ-ի թվաքանակը ավելացել է 3-ով (ՀՀ ԲՆ անտառային կոմիտե, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ պետական վերահսկողական ծառայություն): Միաժամանակ, տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում լուծարվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, իսկ ՀՀ կառավարության աշխատակազմը վերակազմավորվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի: ՏԻՄ-ի թվաքանակը ավելացել է 4-ով (Ջրվեժի համայնքապետարան, Լոռի Բերդի համայնքապետարան Գյուլագարակի համայնքապետարան, Արագածավանի համայնքապետարան): Միևնույն ժամանակ «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների խոշորացման արդյունքներով պայմանավորված՝ լուծարվել է Ագարակի քաղաքապետարանը:

2018 թվականի տարեսկզբին ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքների թիվը՝ կազմել է 136, 2018 թվականին այն ավելացել է 4-ով, բայց միևնույն ժամանակ «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքների խոշորացման արդյունքով պայմանավորված՝ պակասել 18-ով՝ հաշվետու ժամանակահատվածի ավարտին հասնելով թվով 122 համայնքի (տե՛ս Ցանկ N 3):

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակմանն ու համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումների շրջանակում 2018 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Համաշխարհային Բանկի աջակցության շրջանակներում, մշակվել է ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի բաղկացուցիչ՝ ներքին աուդիտի արտաքին գնահատման մեթոդաբանության ձեռնարկ: Այնուհետև «Ներքին աուդիտի արտաքին գնահատում» թեմայով կազմակերպվել է եռօրյա դասընթաց՝ ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների, ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների ներքին աուդիտորների համար: Դասընթացի ավարտին Համաշխարհային Բանկի փորձագետի աջակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների կողմից ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում՝ իրականացվել է ներքին աուդիտի արտաքին գնահատում փորձնական աշխատանքներ.
- ✓ ՀՀ կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 327-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի «Ներքին աուդիտորի որակավորման կարգը և հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու մասին» N 176-Ն որոշման մեջ, համաձայն որի ներքին աուդիտի որակավորման քննությանը մասնակցելու ցանկություն ունեցող անձիք, դիմումները լիազոր մարմին պետք է ուղղարկեն լիազոր մարմնի պաշտոնական կայքում առկա քննությունների գրանցման էլեկտրոնային համակարգի միջոցով, ինչի նպատակով ներդրվել է դիմումների գրանցման

էլեկտրոնային համակարգ, որը հասանելի է www.auditquali.minfin.am ինտերնետային հասցեի, ինչպես նաև www.minfin.am կայք էջի «Հանրային հատվածի ներքին աուդիտ» բաժնի «որակավորում» ենթաբաժնի «դիմել որակավորման համար» պատուհի միջոցով:

Ներքին աուդիտի համակարգի գործունեության շրջանակում 2018 թվականի ընթացքում իրականացված աշխատանքներն են.

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվել են «ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» և «Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերը» (այսուհետ՝ Ցանկեր): Վերջիններիս տվյալների համաձայն հաշվետու ժամանակահատվածի սկզբում Ցանկերում ընդգրկված է եղել թվով 312 աուդիտոր, որից 263 աուդիտորներ (այդ թվում՝ 3 աուդիտոր Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված) հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատակիցներ, իսկ հաշվետու ժամանակահատվածի ավարտին Ցանկերում ընդգրկված են եղել թվով 273 աուդիտորներ, որից 239 աուդիտորներ (այդ թվում 4 աուդիտոր Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված) հանդիսացել են հանրային հատվածի կազմակերպությունների աշխատակիցներ[1]:

Հիմք ընդունելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 541-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով՝ 2018 թվականի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հաշվետու ժամանակահատվածի

[1] Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված աուդիտորների հանրագումարը՝ (232) տարբերվում է Ցանկեր-ում ընդգրկված համապատասխան թվից (239), քանի որ հաշվառված չեն Ցանկեր-ում ընդգրկված հղիության ու ծննդաբերության արձակուրդում գտնվող 5 և «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող 2 աշխատակիցները:

սկզբում Ցանկերում ընդգրկված որակավորված 312 ներքին աուդիտորների համար կազմակերպվել են թվով 13 շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են թվով 240 որակավորված ներքին աուդիտորներ, որից 4-ը՝ 2018 թվականի ընթացքում Ցանկերում նոր ընդգրկված աուդիտորներ են: Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած 240 աուդիտորներից 214-ը՝ հանրային հատվածի աշխատողներ են, այդ թվում՝ 170-ը ՊՄ-ի, 42-ը ՏԻՄ-ի, և 2-ը՝ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի գործառույթների կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներ են, իսկ թվով 26 աուդիտորները ընդգրկված չեն հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցած աուդիտորների թվաքանակը ավելացել է ինչպես 2017 թվականի, այնպես էլ 2016 թվականի համեմատությամբ, համապատասխանաբար 2017 թվականի համեմատ 25-ով կամ 11.6 %-ով, իսկ 2016 թվականի համեմատ 57-ով կամ 31.1 %-ով: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չեն մասնակցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբում Ցանկերում ընդգրկված թվով 76 աուդիտոր, որից թվով 68 աուդիտորներ վերապատրաստման դասընթացին չներկայանալու, թվով 1 աուդիտոր վերաորակավորվելու, թվով 7 աուդիտորներ հղիության ու ծննդաբերության արձակուրդում գտնվելու պատճառով:

Շարունակական մասնագիտական վերապատրաստում անցած աուդիտորներից թեստավորմանը մասնակցել է թվով 229 աուդիտոր, որից թվով 214 աուդիտորներ, այդ թվում՝ 170-ը ՊՄ-ի, 42-ը ՏԻՄ-ի և 2-ը «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանման աշխատողներ են, իսկ թվով 15-ը չեն հանդիսանում հանրային հատվածի կազմակերպությունների գործող աուդիտորներ: Նշված ցուցանիշը 2017 թվականի համեմատությամբ ավելացել է 18-ով կամ 8.5 %-ով, իսկ 2016 թվականի համեմեմատությամբ՝ 108-ով կամ 89.3 %-ով: Շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացի թեստավորմանը մասնակցած թվով 229 աուդիտորներից թվով 228-ը հաղթահարել են թեստավորման նվազագույն շեմը, իսկ թվով 1 աուդիտոր՝ չի հաղթահարել սահմանված նվազագույն շեմը: Այս ցուցանիշը 2017 թվականի

համեմատությամբ նվազել է 1-ով կամ 0.4 %-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ փոփոխության չի ենթարկվել: Շարունակական մասնագիտական վերապատրաստում չանցած կամ թեստավորմանը չմասնակցած կամ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարած աուդիտորների որակավորումը դադարեցվել է, իսկ նրանց անունները հանվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց Ցանկերից, բացառությամբ այն աուդիտորների, որոնք հաշվետու ժամանակահատվածում վերաորակավորվել են կամ գտնվել են հղիության ու ծննդաբերության արձակուրդում: Այսպիսով, 2018 թվականի ընթացքում հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորումը կորցրել են Ցանկերում ընդգրկված, թվով 78 աուդիտորներ, որից թվով 68-ը շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացին չմասնակցելու, թվով 9-ը՝ թեստին չներկայանալու և թվով 1-ը՝ թեստավորման նվազագույն շեմը չհաղթահարելու հետևանքով:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտորի որակավորման կարգի համաձայն՝ 2018 թվականի ընթացքում կազմակերպվել է թվով 9 որակավորման քննություն: Որակավորման քննություններին ներառյալ վերաորակավորվելու համար, հայտ են ներկայացրել թվով 62 դիմորդներ: Նշված ցուցանիշը նվազել է 2017 թվականի համեմատությամբ՝ 72-ով կամ 53.7 %-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ 175-ով կամ 73.8 %-ով: Քննությանը մասնակցելու համար հրավիրված թվով 62 դիմորդներից ներկայացել են թվով 48 դիմորդներ: Որակավորման համար սահմանված շեմը հաղթահարել են 36-ը, որից 1-ը վերաորակավորված, նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ընդգրկել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում:

«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջի կիրարկման շրջանակներում, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ գլխի 5-րդ և 6 րդ կետրի պահանջներին համապատասխան, 2018 թվականի ընթացքում, Հայաստանի Հանրապետությունում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի և այլ կառույցների կողմից տրված

աուդիտորի որակավորումներ ունեցող անձանցից, ներքին աուդիտորների որակավորում ունեցող անձանց ցանկերում ընդգրկվելու համար, ստացվել է 4 դիմում, որոնք ամբողջությամբ բավարարվել են և նրանց շնորհվել է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում և ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին գլխի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջներով, ընդգրկել Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված ինչպես նաև այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկերում:

Վերը նշված դինամիկայի վերլուծության արդյունքներով՝ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց վերաբերյալ 2018 թվականի ամփոփ ցուցանիշներն ունեն հետևյալ պատկերը. 2018 թվականի տարեվերջի դրությամբ առկա է հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող Ցանկերում ընդգրկված թվով 273 աուդիտոր, որից թվով 239 աուդիտորներ, ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 5, ինչպես նաև «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող թվով 2 աշխատողները՝ ընդգրկված են հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում, իսկ թվով 34 աուդիտորներ ընդգրկված չեն հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթի իրականացման աշխատանքներում:

2018 թվականին նախորդ ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ պակասել են Ցանկերում ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված աուդիտորների թվաքանակը, ընդ որում 2017 թվականի համեմատությամբ 17-ով, կամ 6.8 %-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ 6-ով կամ 2.5 %-ով, սակայն 2018 թվականին 2016-2017 թվականների համեմատությամբ ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված աուդիտորների թվաքանակում ավելացել են Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի՝ այլ կառույցների կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում ընդգրկված աուդիտորները, համապատասխանաբար 2017 թվականին մեկ և 2016 թվականի համեմատությամբ 3

աուդիտորներով: Միևնույն ժամանակ պակասել է նաև ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի գործնական աշխատանքներում չընդգրկված աուդիտորների թվաքանակը համապատասխանաբար 2017 թվականին՝ 15-ով կամ 30.6 %-ով և 2016 թվականին՝ 30-ով կամ 46.9 %-ով:

Ստորև գծապատկերում ներկայացված է Ցանկեր-ում ընդգրկված ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ներգրավվածության համեմատական ցուցանիշները հաշվետու և նախորդ ժամանակահատվածների համար, ըստ ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ոլորտում աշխատող, ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործնական աշխատանքներում ընդգրկված և ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի գործնական աշխատանքներում չընդգրկված անձանց:



Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտորների հաստիքների ընդհանուր թիվը՝ ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողները,

կազմել է թվով 345 աուդիտոր, որից 268-ը՝ ՊՄ-ում, 71-ը՝ քաղաքային համայնքներում և 6-ը՝ գյուղական համայնքներում, իսկ համալրված հաստիքների ընդհանուր թիվը՝ ներառյալ հղիության ու ծննդաբերության կամ մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվողները, կազմել է թվով 290 աուդիտոր, որից 225-ը՝ ՊՄ-ում, այդ թվում 191-ը որակավորված և 34-ը ուսուցանվող և 65-ը՝ ՏԻՄ-ում, այդ թվում 47-ը որակավորված և 18-ը ուսուցանվող, որից 59-ը՝ քաղաքային համայնքներում, այդ թվում 43-ը որակավորված և 16-ը ուսուցանվող և 6-ը՝ գյուղական համայնքներում, այդ թվում 4-ը որակավորված և 2-ը ուսուցանվող[2]:

2018 թվականին հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված աուդիտորների թվաքանակը 2017 թվականների համեմատ պակասել է՝ 2-ով, կամ 0.7 %-ով, իսկ 2016 թվականների համեմատ ավելացել է՝ 5-ով կամ 1.7 %-ով: Ստորև ներկայացված գծապատկերում բերված են 2016-2018 թվականների համապատասխան ցուցանիշները:



2018 թվականին 2016-2017 թվականների համեմատությամբ փոփոխության է ենթարկվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում ներգրաված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը: Այսպես՝

[2] Այս և հաջորդ բաժիններում ներկայացված վերլուծության համար հիմք են հանդիսացել սույն հաշվետվության վերջում առկա լիազոր մարմնին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակների տվյալները, առանց Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտի կարգավորման և համակարգման համար պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող 2 հաստիքների:

2018 թվականին գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակն 2017 թվականի համեմատությամբ պակասել է 20-ով կամ 7.7%-ով, ուսուցանվող աուդիտորների թվաքանակն ավելացել է 18-ով կամ 52.9 %-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը պակասել է 7-ով կամ 2.8%-ով, ուսուցանվող աուդիտորների թվաքանակը ավելացել է 12-ով կամ 30.0 %-ով:

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի աշխատանքներում ընդգրկված որակավորված և ուսուցանվող ներքին աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ տարիների ունի ստորև ներկայացված պատկերը:



ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանումների համալրված թվով 290 աուդիտորներից, թվով 225-ը, ներառյալ՝ հղիության ու ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող թվով 5 անձիք, հանդիսանում են ՊՄ, իսկ թվով 65-ը՝ ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների աշխատողներ: 2017 թվականի համեմատությամբ 2018 թվականին ՊՄ աուդիտորների թիվը պակասել է 3-ով, կամ 1.3 %-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թվաքանակ՝ 1-ով կամ 1.6 %-ով: 2016 թվականի համեմատությամբ՝ ՊՄ աուդիտորների թիվը ավելացել է 5-ով կամ 2.3 %-ով, իսկ ՏԻՄ աուդիտորների թիվի փոփոխություն չի եղել:



2018 թվականին փոփոխություն է արձանագրվել նաև ՊՄ և ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների քանական հարաբերակցության մեջ: 2018 թվականի հաշվետու տարում ՊՄ որակավորված աուդիտորների թվաքանակը պակասել է՝ 2017 թվականի համեմատությամբ 19-ով կամ 9.0-%-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ 5-ով կամ 2.5 %-ով, սակայն 2018 թվականին ավելացել է ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 2017 թվականի համեմատությամբ՝ 16-ով կամ 88.0 %-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ 10-ով կամ 41.7%-ով:

ՊՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2016-2018 թվականների, ունի հետևյալ պատկերը.



Միաժամանակ 2018 թվականի հաշվետու տարում 2016-2017 թվականների համեմատությամբ պակասել է նաև ՏԻՄ որակավորված աուդիտորների թվաքանակը՝ համապատասխանաբար 2017 թվականին 1-ով կամ 2.1 %-ով և 2016 թվականին 2-ով կամ 4.1 %-ով, սակայն նույնպես ավելացել է ուսուցանվող աուդիտորների թվաքանակը՝ 2016-2017 թվականների համեմատությամբ՝ 2-ով կամ 12.5 %-ով:

ՏԻՄ որակավորված և ուսուցանվող աուդիտորների հարաբերակցությունն՝ ըստ 2016-2018 թվականների, ունի հետևյալ պատկերը.



ՀՀ Հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի 92 ստորաբաժանումներից[3], այդ թվում ՊՄ՝ 51 և ՏԻՄ՝ 41՝ ստացված տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 3-րդ՝ «Ներքին աուդիտի միջավայրի միավորները» աղյուսակի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2018 թվականի ընթացքում պլանավորվել է աուդիտի ենթարկել ՊՄ և ՏԻՄ 4870 միավորներից 1422 միավոր կամ 29.2%-ը և 22502 գործառույթներից 8074 գործառույթ կամ 35.9%-ը, համապատասխանաբար 2017 թվականին 4956 միավորներից 1508 միավոր կամ 30.4%, 22778 գործառույթից 8943 գործառույթ կամ 39.3% և 2016 թվականի 4932 միավորներից 1536 միավոր կամ 31.1%, 21387 գործառույթներից 7587 գործառույթ կամ 35.5%՝ փոխարեն: Նշված ցուցանիշը 2017 թվականի համեմատությամբ նվազել է ըստ միավորների 86-ով կամ 1.2%-ով, ըստ գործառույթների՝ 869 կամ 3.4% -ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ նվազել է ըստ միավորների 114-ով կամ 1.9% -ով, սակայն ավելացել ըստ գործառույթների՝ 487-ով կամ 0.4 %-ով: 2018 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ և ՏԻՄ 1333 միավոր կամ միավորների 27.4% և 7482

[3] ՀՀ ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի 10 ստորաբաժանումներ 2018թ. տարեկան ամփոփ հաշվետվություն ՀՀ ֆինանսների նախարարություն չեն ներկայացրել,որից 7-ը՝ (ՀՀ Նախագահի աշխատակազմ,ՀՀ սփյուռքի նախարարություն, ՀՀ քննչական կոմիտե, Ապարանի, Թալինի, Ծաղկաձորի և Ջերմուկի համայնքապետարաններ) հաստիքների թափուր լինելու, 1-ը՝ (ՀՀ պետական վերահսկողական ծառայություն) 2018թ. տարեվերջին ներքին աուդիտի համակարգ ներդնելու և 2-ը՝ (ՀՀ դատական դեպարտամենտ, Արմավիրի համայնքապետարան) տարեկան ամփոփ հաշվետվություն (ՀՀ ֆինանսների նախարարության 20.03.2019թ. ուղարկված N 27-2/4733-2019 գրությունը մնացել է առանց արձագանքի) չներկայացնելու պատճառով:

գործառույթ կամ 33.3%: Նշված ցուցանիշը 2017 թվաակնի համեմատությամբ նվազել է ըստ միավորների 130-ով կամ 2.1%-ով, ըստ գործառույթների 1131-ով կամ 4.5%, իսկ 2016 թվականի համեմատությամբ նվազել է ըստ միավորների 137-ով կամ 2.4%-ով, սակայն ավելացել ըստ գործառույթների՝ 524-ով կամ 0.8 %-ով: Նշված ցուցանիշները ըստ ՊՄ և ՏԻՄ ստորաբաժանումների կողմից ներկայացրած տվյալների կազմում են. 2018 թվականին հաշվետու տարում ՊՄ-ի 3435 միավորներից պլանավորվել է աուդիտի ենթարկել 993 միավորներ կամ միավորների 28.9% և 17674 գործառույթից 6411 գործառույթներ կամ 36.3%, 2017 թվականի համապատասխանաբար ըստ միավորների 30.6% կամ 3518 միավորների 1076-ը, ըստ գործառույթի 40.1% կամ 18010 գործառույթների 7229-ը, 2016 թվականին՝ ըստ միավորների 32.8% կամ 3530 միավորներից 1158-ը, և գործառույթների 36.2 % կամ 16745 գործառույթից 6069-ը: 2018 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՊՄ 960 միավոր կամ միավորների 27.9% և 5837 գործառույթ կամ 33.0 %, 2017 թվականին ըստ միավորների 30.1 % կամ 1060 միավոր, ըստ գործառույթների 38.3% կամ 6897 գոծառույթ, իսկ 2016 թվականին՝ ըստ միավորների 31.8 % կամ 1122 միավոր և գործառույթների 33.3 % կամ 5579 գործառույթ:

Միևնույն ժամանակ նշված ցուցանիշները համաձայն ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տվյալների՝ 2018 թվականի հաշվետու տարում պլանավորվել է աուդիտի ենթարկել 429 միավոր կամ միավորների 29.9% և 1663 գործառույթ կամ ընդհանուր թվով 4828 գործառույթների 34.4%, 2017 թվականի համապատասխանաբար ըստ միավորների 30.0% կամ 1438 միավորից 432 միավոր, ըստ գործառույթի 35.9% կամ 4768 գործառույթից 1714 գործառույթ, 2016 թվականին՝ ըստ միավորների 27.0% կամ 1402 միավորից 378 մավոր, և գործառույթների 32.7 % կամ 4642 գործառույթից 1518 գործառույթ: 2018 թվականին փաստացի աուդիտի է ենթարկվել ՏԻՄ 373 միավոր կամ միավորների 26.0% և 1645 գործառույթ կամ 34.1 %, 2017 թվականին ըստ միավորների 28.0 % կամ 403 միավոր, ըստ գործառույթների 36.0% կամ 1716 գոծառույթ, իսկ 2016 թվականին՝ ըստ միավորների 24.8 % կամ 348 միավոր և գործառույթների 29.7 % կամ 1379 գործառույթ:

Համադրելով այս ցուցանիշները, ստացվում է, որ 2018 թվականի ՊՄ և ՏԻՄ փաստացի կատարողականն ըստ միավորների կազմում է 93.7%, իսկ ըստ գործառույթների՝ 92.7%, 2017 և 2016 թվականների համապատասխանաբար ըստ միավորների՝ 97.0% և 95.7%, իսկ ըստ

գործառույթների՝ 96.3% և 91.7% փոխարեն: Նույն ցուցանիշները ՊՄ-ների համար հետևյալն են՝ 2018 թվականին 96.7%, 2017 թվականին 98.5%, 2016 թվականին 96.9%, ըստ գործառույթների՝ 2018 թվականին 91.0%, 2017 թվականին 95.4%, 2016 թվականին 91.9%, իսկ ՏԻՄ-երի դեպքում՝ ըստ միավորների՝ 2018 թվականին 86.9%, 2017 թվականին 93.3%, 2016 թվականին 92.1%, ըստ գործառույթների՝ 2018 թվականին 98.9%, 2017 թվականին 100.1%, 2016 թվականին 90.8%:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունում առկա տեղեկատվության ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի թվով 92 ստորաբաժանումները 2018 թվականի տարեկան ծրագրով պլանավորվել են իրականացնել 2680 առաջադրանք[4], 2017 թվականի 1692 և 2016 թվականի 1835 փոխարեն, աճը 2017 թվականի համեմատությամբ՝ 988 կամ 58.4%, 2016 թվականի համեմատությամբ՝ 845 կամ 46.0%: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2018 թվականին 2249 առաջադրանք[5], 2017 թվականին 1260, 2016 թվականին 1378 առաջադրանքներ, իսկ ՏԻՄ-երում՝ 2018 թվականին 431 առաջադրանք, 2017 թվականին 432, 2016 թվականին 457 առաջադրանքներ: 2018 թվականի տարեկան ծրագրով պլանավորվել են խորհրդատվական թվով 3 ծառայություն մատուցելու աուդիտորական առաջադրանքներ, 2017 թվականի թվով 10 և 2016 թվականի թվով 16-ի փոխարեն, որը 2017 թվականի համեմատությամբ նվազել է 7-ով կամ 70 %-ով, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ 12-ով կամ 81.2%-ով:

Համաձայն տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը» աղյուսակով ներկայացված տվյալների՝ փաստացի իրականացված առաջադրանքների քանակը 2018 թվականին առանց լրացուցիչ (ոչ պլանային) կատարված առաջադրանքների՝ կազմել է 2356 առաջադրանք[6], համապատասխանաբար 2017 թվականի 1585 և 2016 թվականի 1742 առաջադրանքների փոխարեն, աճը 2017 թվականի

---

[4] Առաջադրանքները, կախված աուդիտի տեսակից, կարող են միաժամանակ ընդգրկել միավորներ և գործառույթներ:

[5] Պլանավորված առաջադրանքների քանակային աճը պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման կոմից ներկայացված տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 5-րդ աղյուսակի տվյալներով, համաձայն որի 2018 թվականի հաշվետու տարում պլանավորվել է 1255 առաջադրանքների քանակ:

[6] ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման կոմից փաստացի իրականացված առաջադրանքների քանակը ՝ 1111 առաջադրանք:

համեմատությամբ՝ 771 կամ 48.6%, 2016 թվականի համեմատությամբ՝ 614 կամ 35.2%: Նշված ցուցանիշը ՊՄ-ների դեպքում կազմել է՝ 2018 թվականին 1987, 2017 թվականին 1213, 2016 թվականին 1329 առաջադրանքներ, իսկ ՏԻՄ-ում՝ 2018 թվականին 369, 2017 թվականին 372, 2016 թվականին 413 առաջադրանքներ:

Համադրելով այս ցուցանիշները, ստացվում է, որ չնայած 2016-2017 թվականների համեմատությամբ արձանագրված փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքների քանակային աճին, այնուամենայնիվ 2018 թվականին թերակատարվել է ՀՀ ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից 2018 թվականի համար պլանավորված աուդիտորական առաջադրանքները՝ 324-ով կամ 12.1 %-ով, այդ թվում ՊՄ-ներում 262-ով կամ 11.7%-ով, իսկ ՏԻՄ-ում՝ 62-ով կամ 14.4 %-ով:

Նշված արդյունքները վկայում են, որ 2018 թվականին ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից խախտվել է ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012 թվականի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 168-րդ կետով նախատեսված պահանջը[7]:

ՀՀ ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի 92 ստորաբաժանումնրից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության համաձայն, 2018 թվականին իրականացվել է լրացուցիչ (ոչ պլանային) թվով 41 աուդիտորական առաջադրանք աճը 2017 թվականի համեմատությամբ՝ 10 կամ 32.3 %, իսկ 2016 թվականի համեմատությամբ՝ 3 կամ 7.9%, և մատուցվել է ոչ պլանային թվով 83 խորհրդատվական ծառայություն, համապատասխանաբար 2017 թվականի 96, 2016 թվականի 73 խորհրդատվական ծառայության փոխարեն: Խորհրդատվական ծառայությունները ինչպես 2018 թվականին, այնպես էլ 2017 և 2016 թվականներին կատարվել են 100%-ով: 2018 թվականին իրականացված լրացուցիչ թվով 41 աուդիտորական առաջադրանքից 37-ը կամ 90.2%-ը իրականացվել է ՊՄ-ներում, իսկ 4-ը կամ 9.8 %-ը ՏԻՄ-ում:

ՀՀ ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները ըստ աուդիտի տեսակների, համաձայն 2018 թվականի տարեկան ամփոփ հաշվետվությանը կցված N 10 հավելվածի 4-րդ «Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական

[7] Կետ՝ 168. «Ընդ որում տվյալ տարվա արդյունքներով պետք է կատարված և ավարտված լինեն ռազմավարական ծրագրով պլանավորված աուդիտորական առաջադրանքների առնվազն 90 տոկոսը»:

ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների» աղյուսակի՝ ունի ստորև ներկայացված պատկերը:



Հաշվետու ժամանակահատվածում ՊՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից իրականացված աուդիտորական առաջադրանքներում փոփոխությունը ըստ տեսակների ունի հետևյալ պատկերը: Այսպես՝ 2018 թվականին նախորդ տարվա համեմատ իրականացված ֆինանսական աուդիտների աճը կազմել է՝ 2.8 %, կատարողականի աուդիտի աճը՝ 4.5 % և գնումների աուդիտի աճը՝ 636.8 %[8]: Միևնույն ժամանակ 2018 թվականի հաշվետու տարում 2017 թվականի համեմատությամբ կրճատվել է՝ 17.3%-ով համակարգի գնահատման աուդիտի, 34.2%-ով համապատասխանության կամ իրավական աուդիտի քանակները: 2018 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 1061 աուդիտներից, 377-ը կամ 35.5%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 464-ը կամ 43.8%-ը՝

[8] Գնումների աուդիտի քանակային աճը պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման կոմից ներկայացված տվյալներով, համաձայն որի 2018 թվականի հաշվետու տարում իրականացվել է 1029 գնման աուդիտ:

գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող և 220-ը կամ 20.7%-ը՝ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնման աուդիտն է:



2018 թվականի հաշվետու տարում ի տարբերություն ՊՄ-ների ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից իրականացված աուդիտորական առաջադրանքներում մեծամասամբ իրականացվել են համակարգի գնահատման աուդիտորական առաջադրանքներ, ապահովելով 14.6 % աճ, սակայն միևնույն ժամանակ 2018 թվականին նախորդ տարվա համեմատ կրճատվել է 1.7 %-ով ֆինանսական աուդիտի, 8.4%-ով համապատասխանության կամ իրավական աուդիտի, 22.2 %-ով գնումմերի աուդիտի քանակները, իսկ կատարողականի աուդիտի քանակը՝ փոփոխության չի ենթարկվել: 2018 թվականի ընթացքում իրականացված գնումների թվով 14 աուդիտից, 8-ը կամ 42.9%-ը՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող, 6-ը կամ 57.1%-ը՝

գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող աուդիտն է:

2018 թվականին ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ չի իրականացվել:

Համադրելով երկու աղյուսակի տվյալները ստացվում է, որ ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից փաստացի իրականացված աուդիտորական առաջադրանքները ըստ աուդիտի տեսակների՝ ունի ստորև ներկայացված պատկերը:



Համաձայն ՀՀ ՊՄ և ՏԻՄ ներքին աուդիտի ստորաբաժանումներից ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների՝ 2018 թվականին գնման գործընթացի աուդիտ է իրականացվել նաև աուդիտի մնացած տեսակների շրջանակներում՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումասիրել է թվով 5546 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 3606 գործառույթ, իսկ ՏԻՄ-ում՝ 1940 գործառույթ, որից գնումների բազային միավորի

քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 435, այդ թվում՝ ՊՄ-ներում 367, իսկ ՏԻՄ-ում՝ 68, և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 5111 գործառույթ, այդ թվում՝ ՊՄ-ներում 3239, իսկ ՏԻՄ-ում՝ 1872:

2018 թվականին նվազել է ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից արձանագրված անհամապատասխանությունների քանակը: Նախորդ տարվա արձանագրված 11063 անհամապատասխանության փոխարեն, 2018 թվականին արձանագրվել է թվով 8388 անհամապատասխանություն՝ ապահովելով 24.2 %-ով կրճատում: Նշված ցուցանիշը 2017 թվականի համեմատությամբ ՊՄ-ներում նվազել է 2734-ով կազմելով 6756 անհամապատասխանություն կամ 28.8 %, իսկ ՏԻՄ-ում՝ ավելացել է 59-ով կամ 3.7 %-ով: 2018 թվականին ավելացել է աուդիտորական առաջադրանքների արդյունքներով արձանագրված և իրավապահ մարմիններին փոխանցված անհամապատասխանությունների քանակը՝ հասնելով 67-ի, նախորդ տարվա 13-ի փոխարեն, այդ թվում՝ ՊՄ-ներում 66 դեպք, իսկ ՏԻՄ-ում՝ 1 դեպք, ինչը ներքին աուդիտի գործառույթի արդյունավետության բարձրացման մասին տեղեկատվություն է ներկայացնում:

2018 թվականի հաշվետու տարվա ավարտին ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած 122 գյուղական համայնքներից, ՀՀ ֆինանսների նախարարություն տարեկան ամփոփ հաշվետվություն են ներկայացրել թվով 68 գյուղական համայնքներ, իսկ թվով 54[9] գյուղական համայնքներ՝ հաշվետվություն չեն ներկայացրել լիազոր մարմնին:

ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ 2018 թվականի հաշվետու ժամանակահատվածում պլանավորվել է համայնքներում առկա 73 միավորներից 70 միվորներում կատարել թվով 141 առաջադրանքներ, որից 70-ը աուդիտորական առաջադրանք և 71-ը խորհրդատվական ծառայություն՝ ներառելով միավորների կողմից իրականացվող 477 գործառույթները, սակայն փաստացի իրականացվել է 68 աուդիտորական առաջադրանք, ներառելով 68 միավոր և 477 գործառույթ: Նախատեսված պլանը թերակատարվել է, աուդիտորական առաջադրանիքի և միավորների մասով՝ 2-ով կամ 2.8 %-

[9] ՀՀ ֆիանսների նախարարության կողմից 54 համայնքներին ուղարկվել է գրություններ՝ (ՀՀ ֆինանսների նախարարության 01.04.2019թ. ուղարկված N 27-2/27-2/5362-2019 գրությունը մնացել է առանց արձագանք) :

ով, իսկ գործառույթների մասով կատարվել են 100%-ով: 2018 թվականի հաշվետու ժամակահատվածում գերակատարվել է մատուցված խորհրդատվական ծառայությունների քանակը՝ պլանավորված 71 ծառայության դիմաց, 819 մատուցված ծառայություն: Համաձայն համայնքների կողմից ներկայացված հաշվետվությունների՝ կատարված 68 աուդիտորական առաջադրանքների գծով իրականացվել է համակարգի գնահատման աուդիտ, միաժամանակ հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության մեջ նշելով, որ համակարգի գնահատման աուդիտն իր մեջ ներառել է նաև աուդիտի մնացած տեսակները: Ըստ ստացված տարեկան ամփոփ հաշվետվության ուսումնասիրության արդյունքների կատարված աուդիտի շրջանակներում իրականացվել է նաև գնման գործընթացի աուդիտ՝ ինչպես գնման ընթացակարգերի, այնպես էլ պայմանագրի կատարման մասով, փաստացի ուսումասիրելով թվով 326 գործառույթ, այդ թվում՝ գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող՝ 24 և գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող՝ 302 գործառույթ:

Համաձայն ներկայացված հաշվետվությունների 2018 թվականին 2016-2017 թվականների համեմատությամբ նվազել է արձանագրված անհամապատասխանությունների քանակը կազմելով 934 անհամապատասխանություն: Արձանագրված 837 անհամապատասխանություն ընդգրկվել է գործողությունների ծրագրում և կանխվել աուդիտի արդյունքում, իսկ 97 անհամապատասխանություն ուղղման ենթակա չլինելու պատճառով չեն ընդգրկվել գործողությունների ծրագրում:

Ստորև ներկայացվում է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն[10] ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածով սահմանված ձևաչափի համապատասխան.

[10] Աղյուսակները կազմված են բացառապես ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա, առանձին-առանձին, ստացված ինչպես կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման միջոցով ներքին աուդիտն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այնպես էլ ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքներից:

Լիազոր մարմին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3.4	3.3	3.3
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3.5	3.4	3.4

2. Ներքին աուդիտորներ[11]

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	290	292	285
1.1)	Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը	238	258	245
1.2)	Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը	52	34	40

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	4870	4956	4932
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	22502	22778	21387
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	1422	1508	1536

[11] Ներքին աուդիտորների թվաքանակն ընդգրկում է ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումներում համալրված, ներառյալ հղիության ու ծննդաբերության և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց, առանց «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պատասխանատու ստորաբաժանման ներքին աուդիտորի որակավորում ունեցող աշխատողների:

4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	8074	8943	7587
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	1333	1463	1470
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	7482	8613	6958

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	**Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները**	**2018թ.**	**2017թ.**	**2016թ.**
1)	Համակարգի գնահատման աուդիտ	579	655	620
2)	Կատարողականի աուդիտ	54	52	66
3)	Ֆինանսական աուդիտ	443	436	550
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	0	5	3
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	202	265	289
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	1075	162	198
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	385	50	46
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	105	28	24
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	280	22	22
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	470	110	150
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	192	53	78
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	278	57	72
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	220	2	2

6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	68	2	1
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	152	0	1
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	66	70	49
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	19	20	25
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	1	16	15
10)	Այլ, այդ թվում՝	41	31	38
11)	Ընդամենը	2480	1712	1853

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	2680	1692	1835
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	2677	1682	1819
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	3	10	16
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	2480	1712	1853
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	2394	1606	1764
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	86	106	89

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված նհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	8388	11063	12512

1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	4066	4305	6806
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	4322	6758	5706
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	5811	6739	7481
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	5689	6721	7361
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը	4688	5593	6158
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	39	101	92
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	113	81	108
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	849	946	1003
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝[12]	8306	11035	12048
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	67	13	7
4.2)	Ինքնուրույն կանխված	8239	11022	12041

[12] Տողի հանրագումարի անհանմապատասխանությունների քանակում ներառված չէ ՀՀ կրթության և գիտության նախարարության ներքին աուդիտի ստրաբաժանման կողմից իրականացված աուդի արդյունքներով իրավապահ մարմիններին փոխանցված 4 գործով արձանագրված անհամապատասխանությունների քանակը:

Լիազոր մարմնին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ

Ներքին աուդիտի համակարգ ներդրած և ներքին աուդիտի իրականացման աշխատանքները մասնավոր կազմակերպության պատվիրակած գյուղական համայնքների[13]

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	2.9	3.2	3
2)	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	2.8	3	3

2. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Կազմակերպության միավորների քանակ	73	253	264
2)	Կազմակերպության գործառույթների քանակ	477	919	969
3)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	70	253	148
4)	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	477	919	853
5)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	68	163	148
6)	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	477	841	853

[13] Աղյուսակների 2017-2016թթ. սունյակներում ներառված են՝ 2017թ. 128, 2016թ. 148, գյուղական համայնքների կողմից ներկայացված տարեկան ամփոփ հաշվետվության տվյալները:

3. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Համակարգի գնահատման աուդիտ	68	163	148
2)	Կատարողականի աուդիտ	-	-	-
3)	Ֆինանսական աուդիտ	-	-	-
4)	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ	-	-	-
5)	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	-	-	-
6)	Գնումների աուդիտ, այդ թվում՝	-	-	-
6.1)	Գնումների բազային միավորի քսանապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	-	-	-
6.1.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.1.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
6.2)	Գնումների բազային միավորի քսանապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	-	-	-
6.2.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.2.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
6.3)	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝	-	-	-
6.3.1)	Գնման ընթացակարգի մասով	-	-	-
6.3.2)	Պայմանագրի կատարման մասով	-	-	-
7)	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	819	1375	2155
8)	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում	-	-	-
9)	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն	-	-	147
10)	Այլ, այդ թվում՝	-	-	-

11)	Ընդամենը	887	1538	2450

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	141	506	296
1.1)	աուդիտորական առաջադրանքների քանակ	70	253	148
1.2)	խորհրդատվական ծառայությունների քանակ	71	253	148
2)	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	887	1538	2450
2.1)	Աուդիտորական առաջադրանքների քանակ	68	163	148
2.2)	Խորհրդատվական ծառայությունների քանակ	819	1375	2302

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

	Նկարագիր	2018թ.	2017թ.	2016թ.
1)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	934	2796	5500
1.1)	Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ	766	1872	3604
1.2)	Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ	168	866	1896
2)	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	934	2735	5500
3)	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	837	2430	5099
3.1)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների	669	1622	3502

	քանակը			
3.2)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը	-	-	-
3.3)	Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը	4	-	-
3.4)	Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը	164	808	1597
4)	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	837	2430	5099
4.1)	Իրավապահ մարմիններին փոխանցված	-	-	-
4.2)	Ինքնուրույն կանխված	837	2430	5099

Ցանկ N 1

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ և ՕՐԵՆՔՆԵՐՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. ՀՀ Նախագահի աշխատակազմ
2.ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
3. ՀՀ վարչապետի աշխատակազմ
4. ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմ
5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6. ՀՀ առողջապահության նախարարություն
7. ՀՀ արդարադատության նախարարություն
8. ՀՀ արտաքին գործերի նախարարություն
9. ՀՀ բնապահպանության նախարարություն
10. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
11. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
12. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
13. ՀՀ կրթության և գիտության նախարարություն
14. ՀՀ մշակույթի նախարարություն
15. ՀՀ պաշտպանության նախարարություն
16. ՀՀ սպորտի և երիտասարդական հարցերի նախարարություն
17. ՀՀ սփյուռքի նախարարություն
18. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
19. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
20. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
21. ՀՀ ֆինանսների նախարարություն
22. ՀՀ քաղաքաշինության կոմիտե
23. ՀՀ պետական եկամուտների կոմիտե
24. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե
25. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
26. ՀՀ ոստիկանություն
27. ՀՀ ՏԶՆՆ պետական գույքի կառավարման կոմիտե
28. ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե
29. ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
30. ՀՀ վիճակագրական կոմիտե
31. ՀՀ դատախազություն
32. ՀՀ դատական դեպարտամենտ
33. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով
34. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
35. ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ
36. ՀՀ հատուկ քննչական ծառայություն
37. ՀՀ հեռուստառադիոյի ազգային հանձնաժողով
38. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան
39. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

40. ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայություն
41. ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին
42. ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտե
43. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
44. ՀՀ ԲՆ անտառային կոմիտե
45. ՀՀ քննչական կոմիտե
46. ՀՀ պետական վերահսկողական ծառայություն
47. ՀՀ Արագածոտնի մարզպետարան
48. ՀՀ Արարատի մարզպետարան
49. ՀՀ Արմավիրի մարզպետարան
50. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
51. ՀՀ Լոռու մարզպետարան
52. ՀՀ Կոտայքի մարզպետարան
53. ՀՀ Շիրակի մարզպետարան
54. ՀՀ Սյունիքի մարզպետարան
55. ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
56. ՀՀ Տավուշի մարզպետարան

Ցանկ N 2

ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1.Աբովյանի համայնքապետարան
2.Ալավերդու համայնքապետարան
3.Այրումի համայնքապետարան
4.Աշտարակի համայնքապետարան
5.Ապարանի համայնքապետարան
6.Արարատի համայնքապետարան
7.Արթիկի համայնքապետարան
8.Արմավիրի համայնքապետարան
9.Արտաշատի համայնքապետարան
10.Բյուրեղավանի համայնքապետարան
11.Գավառի համայնքապետարան
12.Գյումրու համայնքապետարան
13.Գորիսի համայնքապետարան
14.Դիլիջանի համայնքապետարան
15.Եղեգնաձորի համայնքապետարան
16.Եղվարդի համայնքապետարան
17.Երևանի համայնքապետարան
18.Էջմիածինի համայնքապետարան
19.Թալինի համայնքապետարան
20. Իջևանի համայնքապետարան
21.Ծաղկաձորի համայնքապետարան

22.Կապանի համայնքապետարան
23.Հրազդանի համայնքապետարան
24.Ճամբարակի համայնքապետարան
25.Մասիսի համայնքապետարան
26.Մարտունու համայնքապետարան
27.Մեծամորի համայնքապետարան
28.Նոյեմբերյանի համայնքապետարան
29.Նոր Հաճնի համայնքապետարան
30.Չարենցավանի համայնքապետարան
31.Ջերմուկի համայնքապետարան
32.Սևանի համայնքապետարան
33.Սիսիանի համայնքապետարան
34.Սպիտակի համայնքապետարան
35.Սպեփանավանի համայնքապետարան
36. Վայքի համայնքապետարան
37.Վանաձորի համայնքապետարան
38.Վեդու համայնքապետարան
39.Տաշիրի համայնքապետարան
40.Քաջարանի համայնքապետարան
41.Ծակքարի համայնքապետարան
42.Նոր Գեղի համայնքապետարան
43. Ջրվեժի համայնքապետարան
44. Լոռի Բերդի համայնքապետարան
45. Գյուլագարակի համայնքապետարան
46. Արագածավանի համայնքապետարան

Ցանկ N 3

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզ՝

1. Անտառուտ համայնքապետարան
2. Աղձք համայնքապետարան
3. Ագարակ համայնքապետարան
4. Ակունք համայնքապետարան
5. Ալագյազ համայնքապետարան
6. Արտաշավան համայնքապետարան
7. Արագածոտն համայնքապետարան
8. Ագարակավան համայնքապետարան

9. Արուճ համայնքապետարան
10. Ավան համայնքապետարան
11. Արևուտ համայնքապետարան
12. Աշնակ համայնքապետարան
13. Բազմաղբյուր համայնքապետարան
14. Դդմասար համայնքապետարան
15. Դավթաշեն համայնքապետարան
16. Դպրեվանք համայնքապետարան
17. Դիան համայնքապետարան
18. Եղնիկ համայնքապետարան
19. Զարինջա համայնքապետարան
20. Զովասար համայնքապետարան
21. Թլիկ համայնքապետարան
22. Թաթուլ համայնքապետարան
23. Իրինդի համայնքապետարան
24. Լեռնարոտ համայնքապետարան
25. Ծաղկահովիտ համայնքապետարան
26. Ծաղկասար համայնքապետարան
27. Կաթնաղբյուր համայնքապետարան
28. Կաքավաձոր համայնքապետարան
29. Կանչ համայնքապետարան
30. Կոշ համայնքապետարան
31. Ղազարավան համայնքապետարան
32. Մաստարա համայնքապետարան
33. Մելիքգյուղ համայնքապետարան
34. Մեծաձոր համայնքապետարան
35. Ներքի Բազմաբերդ համայնքապետարան
36. Նոր Ամանոս համայնքապետարան
37. Շամիրամ համայնքապետարան
38. Շղարշիկ համայնքապետարան
39. Ոսկեթաս համայնքապետարան
40. Ոսկեվազ համայնքապետարան
41. Ոսկեհատ համայնքապետարան
42. Պարտիզակհամայնքապետարան
43. Սուսեր համայնքապետարան
44. Սասունիկ համայնքապետարան
45. Սաղմոսավան համայնքապետարան
46. Սորիկ համայնքապետարան
47. Վերին Սասունիկ համայնքապետարան
48. Վերին Բազմաբերդ համայնքապետարան
49. Վերին Սասնաշեն համայնքապետարան
50. Ցամաքասար համայնքապետարան
51. Ուշի համայնքապետարան

52. Ուջան համայնքապետարան
53. Փարպի համայնքապետարան
54. Օրգով համայնքապետարան
55. Օշական համայնքապետարան
56. Օհանավան համայնքապետարան
57. Օթևան համայնքապետարան

ՀՀ Արմավիրի մարզ՝

58. Բաբակաշատ համայնքապետարան
59. Գայ համայնքապետարան
60. Մերձավան համայնքապետարան
61. Մրգաշատ համայնքապետարան

ՀՀ Գեղարքունիքի մարզ՝

62. Արծվանիստ համայնքապետարան
63. Աստղաձոր համայնքապետարան
64. Գանձակ համայնքապետարան
65. Գեղարքունիք համայնքապետարան
66. Գեղհովիտ համայնքապետարան
67. Դդմաշեն համայնքապետարան
68. Երանոս համայնքապետարան
69. Զովաբեր համայնքապետարան
70. Զոլաքար համայնքապետարան
71. Լիճք համայնքապետարան
72. Լանջաղբյուր համայնքապետարան
73. Լճավան համայնքապետարան
74. Ծաղկունք համայնքապետարան
75. Ծովակ համայնքապետարան
76. Ծովասար համայնքապետարան
77. Ծովինար համայնքապետարան
78. Կարմիրգյուղ համայնքապետարան
79. Կարճաղբյուր համայնքապետարան
80. Ձորագյուղ համայնքապետարան
81. Նորակերտ համայնքապետարան
82. Նորատուս համայնքապետարան
83. Ներքին Գետաշեն համայնքապետարան
84. Շորժա համայնքապետարան
85. Սարուխան համայնքապետարան
86. Սոթք համայնքապետարան
87. Սեմյոնովկա համայնքապետարան
88. Վարդաձոր համայնքապետարան
89. Վարդաշեն համայնքապետարան
90. Վարդենիկ համայնքապետարան

ՀՀ Լոռու մարզ՝

91. Գուգարք համայնքապետարան
92. Մեծավան համայնքապետարան

ՀՀ Կոտայքի մարզ՝

93. Առինջ համայնքապետարան
94. Ակունք համայնքապետարան
95. Գետամեջ համայնքապետարան
96. Գողթ համայնքապետարան
97. Գեղադիր համայնքապետարան
98. Գառնի համայնքապետարան
99. Գետարգել համայնքապետարան
100. Թեղենիք համայնքապետարան
101. Լեռնանիստ համայնքապետարան
102. Կամարիս համայնքապետարան
103. Կաթնաղբյուր համայնքապետարան
104. Հացավան համայնքապետարան
105. Մրգաշեն համայնքապետարան
106. Մեղրաձոր համայնքապետարան
107. Մայակովսկի համայնքապետարան
108. Նոր Երզնկա համայնքապետարան
109. Նոր Արտամետ համայնքապետարան
110. Ողջաբերդ համայնքապետարան
111. Պռոշյան համայնքապետարան
112. Պտղնի համայնքապետարան
113. Ջրառատ համայնքապետարան
114. Սոլակ համայնքապետարան
115. Վերին Պտղնի համայնքապետարան
116. Քանաքեռավան համայնքապետարան
117. Քաղսի համայնքապետարան
118. Քարաշամբ համայնքապետարան

ՀՀ Շիրակի մարզ՝

119. Ամասիա համայնքապետարան

ՀՀ Սյունիքի մարզ՝

120. Գորայք համայնքապետարան
121. Տաթև համայնքապետարան
122. Տեղ համայնքապետարան